ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան
հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (ՊՈԱԿ)
2017 թվականի մարտի 15-ի թիվ 69-Լ հրամանով ձևավորված
գնահատող հանձնաժողովի նիստի

«Մատենադարան» 23 մայիսի 2017թ,
ժամը 12:30

Մեսրոպ Մաշտոցի անվան
հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ
(ք. Երևան , Մաշտոցի պող. 53)

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գ.Գասպարյան Նորագույն տեխնոլոգիաների և հրատարակչական հարցերի գծով տնօրենի խորհրդական

Հանձնաժողովի անդամներ՝

Ա.Մխիթարյան Ցանցային ադմինիստրատոր
Հ.Օհանյան Կայքի ադմինիստրատոր

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Մուրադյան Գնման համակարգող

Նիստին ներկա էին գտնվում «Տեխնոֆորում» ՍՊԸ լիազորված անձ Կարեն Բոյախչյանը և Ցոլակ Գևորգյան ԱՁ լիազորված անձ Կարեն Հարությունյանը:
Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված:

N	ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ընդամենը /ՀՀ դրամ/
1	Միկրոժապավենների թվայնացման սքաներ	7 450 000

Հրապարակվեցին հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու հասցեները՝

«Տեխնոֆորում» ՍՊԸ, ք.Երևան, Շիրազի 36, բն.14 , info@technoforum.am
Ցոլակ Գևորգյան ԱՁ, ք. Երևան, Նազարբեկյան թաղ.31Ա շ., բն.6, tsolak_gevorgyan@mail.ru

ա) Վերոնշյալ կազմակերպությունների կողմից ներկայացված ծրարները համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

բ) Վերոհիշյալ կազմակերպությունների կողմից ներկայացված ծրարներում առկա էին հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Հայտարարվեցին մասնակիցների գնային առաջարկները (ՀՀ դրամ, առանց ԱԱՀ):
«Տեխնոֆորում» ՍՊԸ՝ 6 500 000 (վեց միլիոն հինգ հարյուր հազար)
Ցոլակ Գևորգյան ԱՁ՝ 7 390 000 (յոթ միլիոն երեք հարյուր իննսուն հազար):

Քանի որ «Տեխնոֆորում» ՍՊԸ հանդիսանում է ԱԱՀ վճարող ընկերություն, և առաջարկված գինը ներառյալ ԱԱՀ կազմում է 7 800 000 (յոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որը գերադասում է ՊՈԱԿ կողմից սույն գնումը իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցները,

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Մերժել «Տեխնոֆորում» ՍՊԸ հայտը:
2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Ցոլակ Գևորգյան ԱՁ:
3. 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցել սույն արձանագրությունը ուղարկելու միջոցով՝ նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ընթացակարգի հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է առաջարկվող ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

3. Հանձնարարարել գնման համակարգողին ներկայացնել հարցում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:
4. Հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 30.05.2017թ ժամը 11.00:

Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Գ.Գասպարյան — Հանձնաժողովի նախագահ

Ա.Մխիթարյան — Հանձնաժողովի անդամ

Հ.Օհանյան — Հանձնաժողովի անդամ

Տ. Մուրադյան — Հանձնաժողովի քարտուղար